

ԱՆԴՐԻԱՍ.

ԿԻԼԻԿՅԱՆ ԵՐԱԺՇՏԱՐՎԵՍՏԻ ԱՆՀԱՅՏ ԳՈՐԾԻՉԸ

Ասորիկ Մուշեղյան

Հայ հոգևոր տաղերգության մեջ բազմաթիվ են այն ստեղծագործությունները, որոնց հեղինակային պատկանելությունը հայտնի չէ՝ ձեռագրական վկայությունների բացակայության պատճառով: Սակայն միջնադարյան մատյանների ուսումնասիրության արդյունքում բացահայտվում են մի շարք հեղինակների անուններ, որ գաղտնագրված են գանձ-տաղային ժառանգության մի զգալի մասում: Նրանց թվում է **Անդրիաս** տաղերգուն, որի՝ անվանական աքրոստիկոսով հորինած Հոգեգալստյան տաղի վաղագույն օրինակը գտնվում է 1241 թ. Դրազարկում ընդօրինակված հայոց հնագույն Տաղարանում¹:


«Այլ փաղ Սուրբ Հոգոյն. Այսար պանծալի երգով գոչեմք» (թ. 369բ), ծայրակապ՝ «Անդրիասի երգ» :

Տաղին հաջորդում է “Նորոգաղ տիեզերաց Հոգիդ Աստուած» փոխը (թ. 370ա)՝ “Նուասփի երգս» ծայրակապով, որը նույնպես Անդրիասին է պատկանում²:

¹ Պահվում է Ֆրանսիայի Ազգային գրադարանում, N 79: Այս ձեռագրի մասին տե՛ս **Ա. Քյոշկերյան**, Փարիզի Ազգային Մատենադարանի N 79 Գանձարան-Տաղարանը. Ա. Գանձարան, «Էջմիածին», Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1971, Թ, էջ 48-53; Բ. Տաղարան, «Էջմիածին», 1971, ԺԲ, էջ 31-41:

Ա. Մուշեղեան, Հայոց հնագույն Տաղարանը, “Հայկազեան հայագիտական հանդես», 2018, 38, էջ 155-180:

² Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում փարիզաբնակ երաժշտագետ Արմինե Գրիգորյանին, որի անմիջական ջանքերի շնորհիվ մեզ տրամադրվեց հայոց հնագույն Տաղարանի թվայնացված տարբերակը:



Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France. Département des Manuscrits. Arménie

«Այսօր պանծալի երգով գոչենք» տաղի հնագույն բնագիրը (Փրգ. 79)

Տաղը մեծ տարածում է գտել Գանձարան-Տաղարաններում, որոնց քննությունն ի հայտ է բերում որոշ փոփոխություններ՝ կապված տաղփոխ զույգի կառուցվածքի հետ: Այսպես, նախորդից մեկ հարյուրամյակ անց գրված և ժամանակագրորեն հաջորդող Տաղարանում՝ Վենետիկ (այսուհետև՝ Վնտկ.) N 2070¹ (թ. 162ա-164բ), տաղն ունի երկու փոխ՝

«Ի Սուրբ Հոգի. յԱնդրիասէ տաղ. Այսօր պանծալի երգով գոչենք» («Անդրիասի երգ»),

Փ. «Մեծապայծառ ձայնի գոչեն» («Մեղապարտի»),

Փ. «Նորոգալ տիեզերաց Հոգիդ Աստուած» («Նուաստի երգ»):

Ծայրակապերի «Անդրիասի երգ - Մեղապարտի - Նուաստի երգ» շղթան գոյացնող այս եռերգությունը, ըստ ամենայնի, հեղինակի սկզբնական մտահղացումն է եղել, որի ավելի վաղ գրառումները մեզ չեն հասել: Այս կառուցվածքն առկա է նաև հետևյալ ձեռագրերում, ինչպես Մես-

¹ Վնտկ. N 2070 - Տաղարան, 1348 թ., Սիս, գրիչ՝ Յեսու Արեւելցի. տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Կ. Ե, Յայսմատուրք-Գանձարան-Տաղարան-Տօնացոյց, յօրինեց Հ. Սահակ վրդ. Ճեմճեմեան Մխիթարեան Ուխտէն, Վենետիկ-Ս. Ղազար, 1995:

րոպ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ) 3503¹ (թ. 192բ-194բ), Երուսաղեմ (այսուհետև՝ Եղմ.) 231² (թ. 480):

Որոշ ձեռագրերում տաղ-փոխերի նշյալ շղթան ճեղքվել է՝ տեղի տալով այլ մեկնությունների: Այսպես, ՄՄ 7785³ Գանձարանում (թ. 324ա) «Նորոգաւ տիեզերաց»-ը գրառվել է սկզբնական տաղ ու փոխից անջատ՝ տեղադրվելով որպես Հոգեգալստյան «Նւագեմք Հոգւոյն նւագ վայելուչ» տաղի փոխ (ծայրակապ՝ «Նվագ Հոգոյն Սրբոյ ի Յոհաննիսէ անարժան ծառայէ»), և ըստ այդմ դիտվել որպես մեկ ամբողջություն՝ ընծայվելով Հովհաննես Պլուզ Երզնկացուն⁴:

Հետագա գրչագրերում հանդիպում են մերթ տաղ ու փոխի՝ «Անդրիասի երգ - Մեղապարտի» ծայրակապով (Լվով 52⁵, թ. 193ա), մերթ միայն տաղի՝ «Անդրիասի երգ» (Վնտկ. 1510⁶, թ. 58ա, Վնտկ. 167⁷, թ. 146ա) կամ «Անդրիասի է երգ»⁸ (Վնտկ. 1510, թ. 175բ) ծայրակապերով գրառումներ: Երբեմն խմբագիրները տաղն ու փոխը հատկացրել են Հոգեգալստյան տոնի տարբեր օրերին՝ դրանցից յուրաքանչյուրը որպես տաղային միավոր կցելով տարբեր գանձերի, ինչպես որ ՄՄ 2672⁹ ձեռագրում է (թ. 184ա-187ա):

Անդրիաս տաղերգուի հորինած «Այսօր պանծալի» Հոգեգալստյան տաղի և նրան հարակից փոխերի երաժշտական բաղադրիչները, որ Գանձարան-Տաղարաններում ներկայանում են պատշաճ խազավոր-

¹ Գանձարան, 1394 թ., Սիս, գրիչ՝ Եսայի Սասնեցի:

² Գանձգիրք + Տաղարան, Երուսաղեմ, 1404-1411, գրիչ՝ Ա. Յակոբ գրիչ, Բ. Լեւոն դպիր. տե՛ս Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. առաջին, կազմեց Ն. եպս. Պողարեան, Երուսաղեմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 1966:

³ Գանձարան, ԺԴ դ., Ղրիմ, գրիչ՝ Յովհաննէս:

⁴ Տե՛ս Մատենագիրք Հայոց, ԺԴ. հատոր, Գանձարան, երկու գրքով, աշխ. Վ. Դերիկեանի, գիրք Բ., Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 1611:

⁵ Գանձարան եւ Տաղարան, 1424 թ., Ամասիա, գրիչ՝ Յովհաննէս. տե՛ս Ցուցակ հայերէն ձեռագրաց ի Լվով եւ ի Ստանիսլաւով, կազմեց Հ. Ներսէս վ. Ակինեան, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1961:

⁶ Տաղարան, ԺԶ դ., տեղի՝ անյայտ:

⁷ Գանձարան, 1610 թ., տեղի՝ անյայտ:

⁸ Ծայրակապում «է» օժանդակ բայի առկայությունը կարող է նշանակել երկու բան. կա՛մ գրիչ տեքստային հավելագրություն է, որի բովանդակությունը ձեռագրի նկարագրությունից կարելի չէ կոահել, կա՛մ էլ՝ հատորում սպրդած տպագրական վրիպակ:

⁹ Գանձարան, 1607 թ., Կաֆա, գրիչ՝ Ստեփանոս Թոխաթցի:

մամբ, չեն պահպանվել: Դրանց ծայնեղանակների մասին, սակայն, մի որոշակի պատկերացում կարելի է կազմել՝ հետևելով երգչական մատյաններում առկա լուսանցանշումներին, որտեղ ցուցված են «Ով զարմանալի»¹ կամ “Պատճառ պարծանաց»² տաղերի սկզբնաբառերը: Եզակի կարելի է համարել “Մեծապայծառ» փոխին առնչվող հղումը՝ «Իմ եղական»³, որ, ամենայն հավանականությամբ, քաղված է Ս. Ներսես Շնորհալու «Յաղագս երկնից եւ զարդուց նորա» քերթվածի սկզբնատողից՝ «Իմ եղական գոլով բնութին եւ սկզբնական»:

Անհրաժեշտաբար պիտի նկատել, որ Անդրիասի հորինած տաղ ու փոխերում, ինչպես միջնադարյան հեղինակների երգերի մի զգալի մասում, առկա է Կլայեցի մեծ Երգեցողի ազդեցությունը՝ բառազանձի գործածության առումով: Կարծում ենք, որ երգերի երաժշտական բաղադրիչները պետք է հորինված լինեն ԺԳ դարի կիլիկյան երգարվեստին բնորոշ մեծակերտ-զարդարական ոճով, գուցե թե՛ նաև կրելով շնորհալիական երգարվեստի դրոշմը:

¹ ՄՄ 7785, թ. 317բ: ՄՄ 2672, թ. 185ա:

² ՄՄ 2672, թ. 185ա:

³ ՄՄ 7785, թ. 318բ:



Հոգեգալուստ

ՄՄ 10675, Մալաթիայի Ավետարան, 1268 թ., Հռոմկա,
գրիչ և ծաղկող՝ Թորոս Ռոսլին, թ. 305ա:

ԺԳ դարում ստեղծագործած Անդրիաս տաղերգուի մասին տեղեկություններ չեն պահպանվել: Պատմական սկզբնաղբյուրների՝ մեր կատարած ուսումնասիրությունն ի հայտ է բերում նույն ժամանակաշրջանում Կիլիկիայում ապրած **Անդրիաս (կամ Անդրէաս)** անունով նշանավոր

գործչին, որին հիշատակում է Ղ. Ալիշանը¹: Նա Հեթում Ա արքայի օրոք զբաղեցնում էր *Ջանցլերի (կանցլեր, Chancelier)*՝ ատենադպրի կամ արքունի քարտուղարի պաշտոնը, որը Կիլիկիայի հայկական պետության մեջ գլխավորներից մեկն էր². այն «յաւէտ յեկեղեցական կարգէ ընտրէր, յորում՝ յայտ է թէ գիտնագոյնքն գտանէին ի գրութիւն և ի շարագրութիւն բանից և ի թարգմանութիւնս լեզուաց»³: *Ջանցլերը* թագավորական դիվանատան գլուխն էր, որ կազմում էր արտոնություններ և այլ փաստաթղթեր, գրագրություն էր վարում պապի և օտարերկրյա պետությունների հետ՝ գլխավորապես հայերեն, ինչպես նաև մի շարք օտար լեզուներով⁴: Այս պաշտոնյայի պարտավորությունների շրջանակում էր նաև թագավորին ուղեկցելը՝ նրա բազմաթիվ շրջագայությունների և ուղևորությունների ժամանակ⁵: Ինչպես հավաստում է Ալիշանը՝ Անդրիասը ևս Հեթում Ա-ի մշտական ուղեկիցների թվում էր⁶:

- ¹ **Հ. Ղ. Վ. Մ. Ալիշան**, Սիսուան. համագրութիւն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ, Ս. Ղազար, 1885, էջ 485: Ղ. Ալիշանը և նրա հետևորդները իրենց աշխատություններում գործածել են **Անդրէաս** գրելաձևը (այդպես ենք վարվել նաև մենք՝ մեջքերում կատարելիս): Հոդվածի շարադրանքում, երկգրությունից խուսափելու նպատակով, գործածել ենք **Անդրիաս** գրելաձևը (ըստ հեղինակային աքրոստիկոսի):
- ² *Ջանցլերի պաշտոնի մասին առավել հանգամանալից տե՛ս V. Langlois, Le trésor des chartes d'Arménie ou cartulaire de la chancellerie royale des Roupéniens, Venise typographie Arménienne de Saint – Lazare, 1863,*
- p. 47-48, etc. **V. Langlois**, Essai historique et critique sur la constitution sociale et politique de l'Arménie sous les rois de la dynastie Roupénienne, St.-Petersbourg, commissionaires de l'Académie Impériale des Sciences, 1860, p. 10-11, etc.
- ³ **Ղ. Ալիշան**, Սիսուան, էջ 485. «[...] և զի այսպիսի մեծի արքայական քաղաքի հոգևոր վերատեսուչն էր պաշտօնեայն, ապա և մեծապատիւ էր քան զյոզունս ի պաշտօնէից, այլ ոչ մեծագոր. և գործ էր նորա գրել և ստորագրել արքունի հրովարտակաց, կրելով և պահելով զկնիք թագաւորի. և ըստ աստիճանին՝ դատողական ևս վարելով տեսչութիւն, յառանձին կարևոր դէպս»: *Ջանցլերի պաշտոնում բարձր հոգևորական դասի ներկայացուցիչներ նշանակելը պայմանավորված էր այն հանգամանքով, որ պաշտոնը չդառնար որևէ իշխանական տան ժառանգական արտոնություն. տե՛ս Գ. Միքայելյան, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Երևան, Երևանի պետական համալսարանի հրատ., 2007, էջ 261:*
- ⁴ **Գ. Միքայելյան**, նշվ. աշխ., էջ 260:
- ⁵ **V. Langlois**, Le trésor des chartes d'Arménie, p. 19.
- ⁶ **Ղ. Ալիշան**, Սիսուան, էջ 519:

Հիշատակելով Անդրիասին Սսի մի շարք նշանավոր գրիչների և «գիտունների» շարքում՝ Ղ. Ալիշանը նրան կոչում է նաև Իմաստասեր¹: Հ. Աճառյանն իր «Հայոց անձնանունների բառարանում» երկրորդում է Ղ. Ալիշանին՝ գրելով. «Անդրէաս իմաստասեր, ատենադպիր Հեթում Ա «1226-70» թագավորի. հիշված է ջանցւերների շարքում, 1243-1264 թվերի միջև»²: Հ. Անասյանն էլ, հետևելով Ալիշանին, նշում է, թե նա Հեթում Ա թագավորի ատենադպիրն էր ԺԳ դարի կեսերին³:

Անդրիասի գործունեության մոտավոր ժամանակաշրջանն ընկնում է նրան նախորդող և հաջորդող ջանցւերների պաշտոնավարման միջակայքում, իմա՝ 1243-1261 թվականներին⁴: Ղ. Ալիշանը նրա անվան դիմաց հարցական է դնում՝ որևէ ստույգ թվական չունենալով: Նախորդ ջանցւերի՝ Գրիգոր Երեցի պաշտոնավարման սկիզբը դնում է 1243 թվականին՝ չնշելով այդ պաշտոնը զբաղեցնելու ժամանակահատվածը: Այնպես որ՝ թեև անհայտ է Անդրիասի պաշտոնավարման սկիզբը, սակայն հստակ է ավարտը՝ 1261 թ., երբ նրան փոխարինելու է գալիս Թորոս արքեպիսկոպոսը:

Անշուշտ, ջանցւերի պետական պաշտոնին նշանակվելու համար Անդրիասը համապատասխան տարիք և փորձառություն պետք է ունենար՝ հասած լինելով նաև քահանայական դասի պատշաճ աստիճանի: Նրան գուցե թե ծնված պետք է համարել մոտ 1200 թ. կամ քիչ ավելի վաղ: Նա, հարկավ, կրթություն է ստացել Կիլիկյան բարձրագույն տիպի դպրոցներից մեկում, եղել լայն մտահորիզոնի տեր և մի քանի լեզուների գիտակ (ենթադրելով իր զբաղեցրած պաշտոնից)՝ դառնալով ժամանակի փայլուն պետական և եկեղեցական գործիչներից մեկը: Հայտնի է, որ միջնադարի մեր եկեղեցական գործիչները միաժամանակ նաև քաջահմուտ բանաստեղծ-երաժիշտներ էին: Անվերապահորեն՝ Անդրիասը ևս նրանց շարքին էր դասվում, հատկապես, որ կրում էր «Իմաստասեր» տիտղոսը, որ միջնադարում նշանակում էր նաև եկեղեցական երաժիշտ, փիլիսո-

¹ Նույն տեղում, էջ 516:

² Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, Երևանի պետական համալսարան, 1942, էջ 160, N 9 (հղում է Ղ. Ալիշանի երկը):

³ Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Ե-ԺԸ դր., հ. Ա, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1959, սյուն. 869:

⁴ Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 485:

փա¹: Այս ամենը նկատի առնելով՝ հիմքեր ունենք «Այսաւր պանծալի երգով գոչեմք» տաղն իր հարակից փոխերով վերագրելու նրան:

Ղ. Ալիշանը, խոսելով Անդրիաս ատենադպրի մասին, նշում է՝ «յորմէ մնայ սուղ ինչ տօմարական բան»² (առանց որևէ հղման): Մեր որոնումների արդյունքում գտանք այդ բնագիրը՝ «Ձայնագիտ. արարեալ յԱնդրիասէ Իմաստասիրէ՝ յատենադպրէ Թագաւորին Հեթմոյ» խորագրով, որը գետեղված է «Ձայնքաղ Շարական»-ներում³: Սա տոմարական հաշվարկների վերաբերյալ մի աղյուսակ է՝ կից ուղեցույցով («Խրատ առ եկեղեցական վայելօղ անծինս»), որում պարզաբանվում են օրվա ձայնի գյուտին և դրան առնչվող հարցեր: Մինչ այժմ էլ Անդրիասի կազմած «Ձայնագիտ»-ը բոլոր «Ձայնքաղ»-ների անբաժանելի մասն է կազմում:

¹ **Հ. Գ. Աւետիքեան, Հ. Խ. Սիւրմէլեան, Հ. Մ. Աւգերեան**, Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. Ա (Ա-Կ), Վենետիկ-Ս. Ղազար, 1836, էջ 848:

² **Ղ. Ալիշան**, Սիսուան, էջ 516:

³ Տե՛ս, օրինակ, Կ. Պոլսում հրատարակված «Ձայնքաղ Շարական»-ները՝ 1743 թ. (էջ 559, չհամ.), 1794 թ. (էջ 559, չհամ.) և այլն: 1794-ի հրատարակության հասանելի թվայնացված օրինակում «Ձայնագիտ»-ի և մի քանի այլ թերթեր պակասում են: Այդ փաստի բացահայտման և հատկապես «Ձայնագիտ»-ի առկայության մասին տե՛ս **Մ. Մինասեան**, Հայերէն նորայայտ հնատիպ գիրքեր եւ մատենագիտական լրացումներ, «Հասկ» հայագիտական տարեգիրք, 1995-1996, է-Ը, էջ 583: «Ձայնագիտ»-ի բնագիրը, հավանաբար, ներառել են նաև նախքան այդ հրատարակված հնատիպ «Ձայնքաղ»-ները (1669, 1724 և այլն), սակայն հասանելի հրատարակություններում համապատասխան թերթերը պահպանված չեն:



«Ձայնքաղ Շարական», Կ. Պոլիս, 1743 թ.:

Ուրեմն, Անդրիաս Իմաստասերը, բացի պետական-հասարակական գործիչ լինելուց, նաև հայտնի փիլիսոփա-երաժիշտ էր, տաղերգու, տո-

մարագետ և ծխագետ, որը ծանրակշիռ ավանդ ունի և՛ հայոց պետական-քաղաքական կարգի, և՛ եկեղեցական-հոգևոր մշակույթի պատմության մեջ:

Վերոնշյալ աղյուսակում առանձնահատուկ ուշադրության է արժանի Անդրիաս ատենադպրի հետ մեկտեղ Հեթում Ա արքայի հիշատակման փաստը: Հայտնի է, որ Աստվածասեր արքայի պատվերով բազում ձեռագրեր՝ Աստվածաշունչ մատյաններ, Ավետարաններ, եկեղեցական գրքեր, երաժշտաճիսական մատյաններ, մեկնողական երկեր են գրվել: Կարծում ենք, որ այս տոմարական աղյուսակը ևս ստեղծվել է համանման մի պատվերի արդյունքում՝ ի պետս եկեղեցու սպասավորաց:

Կիլիկյան Հայաստանի երկու պետական գործիչներին խորհրդանշաբար միավորում է նաև Հոգեգալստյան «Այսօր պանծալի» տաղի հնագույն բնագիրը ներփակող կիլիկյան ձեռագիրը, որը գրվել է հենց Հեթումի թագավորության օրոք՝ 1241 թ., ինչպես նշում է Հովհաննես գրիչն իր հիշատակարանում (թ. 402): Վերջինս երախտագիտությամբ է հիշում ձեռագիրն իրեն «անձանձիր» շնորհած Հուսեփ երաժշտապետին. ասել է թե՛ ձեռագրի գաղափար օրինակը, ի մասնավորի նաև՝ խնդրո առարկա տաղն իր սարքով վաղուց ևեթ գոյություն են ունեցել: Հետաքրքիր մի զուգահիսություն էր, Տաղարանի գրչության թվականից մեկուկես տասնամյակ առաջ՝ 1226 թվականի հունիսի 14-ին, հենց Հոգեգալստյան տոնի օրը, տեղի էր ունեցել Հեթում Ա-ի թագադրման ծեսն ու Չապել թագուհու հետ պսակադրության կարգը. «և հրաւեր կարդացեալ հեռաւորաց և մերձաւորաց՝ աշխարհաժողով և մեծաշուք հանդիսի ի մայրաքաղաքն Տարսնի, յաւուր տօնի Գալստեան Հոգւոյն Սրբոյ (ի 14 յունիսի 1226 ամի), օծին ձեռամբ կաթողիկոսին Կոստանդեայ ի թագաւոր Հայոց, և պսակեցին ընդ Չապելի»¹: Արդ՝ արդյո՞ք հենց այս դարակազմիկ իրադարձության առթիվ չէ՞ Անդրիաս տաղերգուն հորինել իր հոգևոր երգերը. մեր այս ենթադրությունը միանգամայն հնարավոր ենք համարում և՛

¹ Դ. Ալիշան, Սիսուան, էջ 528: Հմմտ. նաև **Սմբատայ Սպարապետի Հայոց** Տարեգիրք, ի լոյս ընծայեաց ծանօթութեամբք Կ. վրդ. Շահնագարեանց, Փարիզ, ի գործատան Կ. Վ. Շահնագարեանց, 1859, էջ 121: **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, աշխ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1961, էջ 189-190, 286-287: **Մ. արք. Օրմանեան**, Ազգապատում, հ. Բ, Կ. Պոլիս, հրատ. Վ եւ Հ. Տէր-Ներսէսեան, 1914, § 1105:

դիտարկման արժանի:

Կիլիկյան հնագույն Տաղարանը նշանակալի է ոչ միայն իր վաղեմությամբ, այլև պարունակած մեծարժեք նյութերով, այն է՝ մինչ այդ մեծ ծաղկման հասած հայ տաղերգությունն իր ողջ շքեղությամբ՝ սկսած Ոսկեդարյան շրջանի հայ հեղինակներից՝ Ս. Մովսես Խորենացուց և Ս. Սահակ Պարթևից մինչև Ս. Գրիգոր Նարեկացի, Ս. Ներսես Շնորհալի, Գրիգորիս Գ Պահլավունի և Ներսես Լամբրոնացի¹: Սակայն մատյանի գաղափար օրինակի շնորհողը՝ Հովսեփ երաժշտապետ Դրազարկցին, հատուկ նախանձախնդրություն է ցուցաբերել՝ ընդգրկելով նաև ժամանակակից հայտնի հեղինակների լավագույն տաղային ստեղծագործությունները: Այդ հեղինակների թվում էր նաև Անդրիաս ատենադպիրը՝ իրեն «մեղապարտ» ու «նուստ» անվանող, սակայն միջնադարի տաղանդավոր երաժիշտ-փիլիսոփան:

Բանալի բաներ՝ Կիլիկիա, Հեղում Առաջին, Անդրիաս, կանցլեր, Դ. Ալիշան, երաժիշտ-փիլիսոփա, տաղարան, տաղ, փող

АНДРИАС: НЕИЗВЕСТНЫЙ ДЕЯТЕЛЬ КИЛИКИЙСКОГО МУЗЫКАЛЬНОГО ИСКУССТВА

Астхик Мушегян

Ключевые слова: Киликия, Гетум Первый, Андриас, канцлер, Г. Алишан, музыкант-философ, Тагаран, таг, пох.

Начиная с 1241 года в певческом сборнике *Тагаран* копировался таг «Сегодня славной песней», посвященный ко Дню Святой Троицы, сочиненный именным акростихом: «Песнь Андриаса». За ним следовали два *поха* (духовных песнопений), также принадлежавшие его перу. Об этом авторе XIII века сведения не сохранились. Среди исследованных нами исторических первоисточников был выявлен живший в то же время в Киликии известный деятель Андриас, который занимал государственный пост канцлера (или джанцлера) при дворе короля Гетума Первого. Известно, что армянские общественно-церковные деятели средневековья были также искусными поэтами и музыкантами. К их числу несомненно принадлежит и Андриас, носивший титул «Имастасер» (философ), что в сред-

¹ Տաղարանային միավորների հեղինակների մասին տե՛ս Ա. Քյոշկերյան, նշվ. աշխ. (մաս Բ):

ние века означало также церковный музыкант. На основе изложенных в статье совокупных фактов мы полагаем, что автором *taga* «Сегодня славной песней» и сопутствующих его песен является Андриас – известный государственный, церковный и музыкальный деятель Киликийской Армении.

ANDRIAS: UNKNOWN PERSON OF CILICIAN MUSICAL ART

Astghik Musheghyan

Keywords: *Cilicia, Hetum the First, Andrias, chancellor, G. Alishan, musician-philosopher, Tagharan, tagh, pox.*

Since 1241, in the Tagharan song-book, the tagh “Today with a glorious song” was copied, dedicated to the Pentecost, composed in a nominal acrostic: “The Song of Andrias”. It was followed by two *poxs* (sacred chants) also written by him. Information about this author of the XIII century has not been preserved. Among the historical primary sources studied by us, the well-known figure Andrias, who lived at the same time in Cilicia, was identified, who held the state post of chancellor (or *jantsler*) at the court of King Hetum the First. It is known that the Armenian public and church figures of the Middle Ages were also skilled poets and musicians. Among them undoubtedly belongs Andrias, who bore the title “*Imastaser*” (philosopher), which in the Middle Ages also meant a church musician. On the basis of the cumulative facts presented in the article, we believe that the author of the tagh “Today with a glorious song” and its accompanying songs is Andrias, a well-known statesman, church and musical figure of Cilician Armenia.

Աստղիկ Մուշեղյան – արվեստագիտության թեկնածու, «Մատենադարան»- Մերուպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի ավագ գիտաշխատող

a.musheghyan@gmail.com

Астхик Мушегян - кандидат искусствоведения, старший сотрудник Матенадарана-института древних рукописей имени Месропа Маштоца

Astghik Musheghyan - PhD in Art, Senior resaercher of Matenadaran - Institute of Ancient Manuscripts after Mesrop Mashtots